ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

24 ՄԱՐՏԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 (տասներկու) անդամներ:

Բացակա էին՝ ավագանու անդամներից՝ Վ. Հովսեփյանը, Գ. Հայրապետյանը, Վ. Սարգսյանը՝ հարգելի աշխատակիցներից չի ծանոթացել անվտանգության խնդրանքով գրասենյակ Ա. Խաչատրյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ֆ. Ոսկանյանը, Ժ. Յեսայանը, Ճ. Պողոսյանը, Ա. Օհանյանը, Ն. Սարգսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ավագանին որոշում է՝

1.Հաստատել 24-ը մարտի 2023թ. թիվ 3 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Ավագանու 14/12/2022թ. «Եղեգիս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» թիվ 120Ն որոշման հավելվածում լրացումներ կատարելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,

4.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարքը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին,

5.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

6.Ավագանու 23/12/2022թ. «2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 145Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,

7.Եղեգիս համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի օր սահմանելու մասին,

8.Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

9.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը և հողամասի վրա գտնվող ավտոտնակները, ծածկը կառուցապատող Մխիթար Խաչիկի Վարդանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին,

10.Վայոց ձորի մարզպետին ուղղված ուղերձ ընդունելու մասին,

11.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց /մշտական/ բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու մասին,

12.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողատեսքերից աճուրդային կարգով օտարելու մասին,

13.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից աճուրդային կարգով օտարելու մասին,

14.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր հողատեսքերից աճուրդային կարգով օտարելու մասին,

15.Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

16.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքով օտարելու մասին,

17.Եղեգիս համայնքի ավագանու 17/02/2023թ. թիվ 14Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին,

18.Եղեգիս համայնքի ավագանու 29/06/2021թ. թիվ 65Ա, 13/08/2021թ. թիվ78Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրած գյուղատնտեսական տեխնիկաներով, տրանսպորտային միջոցներով մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ սահմանելու և մեխանիզատորի, վարորդի, տրակտորիստի վարձատրության չափ սահմանելու մասին,

19.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ- 8 Դեմ- 4 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20Ա/

Լսեցին

ԱՎԱԳԱՆՈՒ 14/11/2022Թ. «ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 18-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ120Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՐԱՉՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1. Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի «Եղեգիս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» թիվ 120Ն որոշման կից հավելվածում՝

ա)Կանոնակարգի 2-րդ գլուխը /Ավագանին և նրա լիազորությունները/ լրացնել նոր 42.3/ կետով՝ «42.3.համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր:»:

բ) Եղեգիս համայնքի ավագանու Կանոնակարգի 7-րդ գլուխը /Ավագանու նստաշրջանները և նիստերը/ լրացնել նոր 98.1 կետով՝ «98.1. օրակարգի հաստատումից հետո ավագանու նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

1.Նիստ վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ հիմնական ու հարակից զեկուցողներին.

2.Հիմնական զեկուցողի ելույթը՝ մինչև 10 րոպե.

3.Հարցեր հիմնական զեկուցողին՝ մինչև 2 րոպե.

4.Հարակից զեկուցողի ելույթը՝ մինչև 5 րոպե.

5.Հարցեր հարակից զեկուցողին՝ մինչև 2 րոպե.

6.Մտքերի փոխանակություն՝ մինչև 3 րոպե.

7.Նիստը վարողի եզրչափակիչ ելույթը՝ մինչև 4 րոպե.

8.Քվեարկություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21 Ն/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԱՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի և 82.1.-րդ հոդվածի պահաջներով

ավագանին որոշում է՝

Հաստատել Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող «Պլանտաժներ» կոչվող տարածքում 0,3 հա մակերեսով խոտհարքը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրել Հորբատեղ բնակավայրի բնակիչ Մովսես Եղիշեի Սարգսյանին:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն, 24/01/2020թ. թիվ 11Ա որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը , ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24Ա/

Լսեցին
ԱՎԱԳԱՆՈՒ 23/12/2022Թ. «2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 145Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, ինչպես

նաև հիմք ընդունելով «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի ղեկավար Ռ. Խաչատրյանի գրությունը, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «2023 թվականի համար Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 145Ա որոշման կից հավելվածը շարադրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի օր սահմանել 2023 թվականի ապրիլի 21 -ը, ժամը ~~15:00~~-ին:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26Ա/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի

մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Աղասի Ղուկասի Խանոյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքը /0,28298հա մակերեսով, 10-035-0231-0079 կադաստրային ծածկագրով, 4-րդ խմբի հողամաս/ փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման /բնակելի տուն կառուցելու համար/:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ, ԾԱԾԿԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 10/03/2023թ. թիվ 71Ա որոշումը

ավագանին որոշում է՝

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի 3-րդ փողոց թիվ 8/3 հասցեում գնվող 0.0451 հա հողամասը (ծածկագիր՝ 10-031-0011-0001-ից, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) և հողամասի վրա ինքնակամ կառուցված 132,95քմ արտադրական նշանակության ավտոտնակները և ծածկը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Մխիթար Խաչիկի Վարդանյանին:

2.Հաստատել հողամասի և արտադրական շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) *132,95 քմ ընդհանուր մակերեսով արտադրական շինությունների համար՝ 142530 (մեկ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ,*

բ) 0.0451հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ հողամասի *արժեքը՝ 63996,9 (վաթսուներեք հազար ինը հարյուր իննսունվեց ամբողջ ինը տասնորդական) ՀՀ դրամ:*

Ընդամենը՝ 206526,9 (երկու հարյուր վեց հազար հինգ հարյուր քսանվեց *ամբողջ ինը տասնորդական*)ՀՀ դրամ:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28Ա/

Լսեցին

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 8 Դեմ- 1 Ձեռնպահ- 3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ «ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14/01/2010 թվականի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ստորև ներկայացված Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու համար.

կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0155, մակերեսը՝ 674.10908հա,
կադաստրային ծածկագիր 10-041-0551-0001, մակերեսը 68,90944 հա,
կադաստրային ծածկագիր 10-041-0557-0005, մակերեսը 103,08903 հա,
կադաստրային ծածկագիր 10-041-0557-0013, մակերեսը 66,39675 հա:

2. Անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը չխոչընդոտելու պայմանով:

3.Հողամասերում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասերի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան:

Կողմ- 8 Դեմ- 4 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0040-0041, մակերեսը 0,103հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 /մեկ հարյուր հիսուն/ տոկոսը:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ- 4 Դեմ- 1 Ձեռնպահ- 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0231-0074, մակերեսը 0,4194հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 /մեկ հարյուր հիսուն/ տոկոսը:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ- 4 Դեմ- 8 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ հողատեսքը աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0231-0059, մակերեսը 0,58324:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 /մեկ հարյուր/ տոկոսը:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33Ա/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԵԳԻՆ ԵՂՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով

ավագանին որոշում է՝

1.Հերմոն գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Վահե Իլիչի Օհանյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0125-0006, մակերեսը՝ 0,82հա/ առանձնացված 2000ք/մ հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության

օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ կառուցելու համար:

2.Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Կողմ-12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ) ենթակետով, 21.1.մասի պահանջներով, հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը ուղղակի վաճառելու միջոցով օտարել <<Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին՝ Իրան-Հայաստան 400ԿՎ օդային գծի կառուցման համար՝

գ. Աղնջաձոր
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0194, մակերեսը 0,01276հա, այլ հողատեսք, 861.30 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0144-0511, մակերեսը 0,01416հա, այլ հողատեսք, 955,80 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0195, մակերեսը 0,0219հա, այլ հողատեսք, 1478,25 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0190, մակերեսը 0,01368հա, այլ հողատեսք, 923,40 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0191, մակերեսը 0,0121հա, այլ հողատեսք, 816,75 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0188, մակերեսը 0,01742հա, այլ հողատեսք, 1175,85 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0146-0068, մակերեսը 0,0102հա, այլ

հողատեսք, 688,50 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0144-0510, մակերեսը 0,02624հա, այլ հողատեսք, 1771,20 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0189, մակերեսը 0,0121հա, այլ հողատեսք, 816.75 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0192, մակերեսը 0,01232հա, այլ հողատեսք, 831.60 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0146-0069, մակերեսը 0,0121հա, այլ հողատեսք, 816,75 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0101-0193, մակերեսը 0,01488հա, այլ հողատեսք, 1004,40 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0172-0011, մակերեսը 0,0096հա, արոտավայր հողատեսք, 648,00 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-007-0172-0012, մակերեսը 0,0144հա, արոտավայր հողատեսք, 972,00 ՀՀ դրամ:

գ. Շատին

կադաստրային ծածկագիր 10-035-0210-0025, մակերեսը 0,0144հա, խոտհարք հողատեսք, 4140,00 ՀՀ դրամ,
կադաստրային ծածկագիր 10-035-0210-0026, մակերեսը 0,0144հա, արոտավայր հողատեսք, 2880,00 ՀՀ դրամ:

գ. Թառաթումբ

կադաստրային ծածկագիր 10-024-0104-0010, մակերեսը 0,01638հա, այլ հողատեսք, 1105,65 ՀՀ դրամ:

Կողմ- 8 Դեմ- 4 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17/02/2023թ. ԹԻՎ 14Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, և 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 14Ա որոշման հղման մեջ «82.1.-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով» բառերից հետո լրացնել ««Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու Ֆինանսատնտեսական և զբոսաշրջության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրամադրված 13/02/2023թ. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը և 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությանը դրական եզրակացություն տալու մասին» թիվ 3 որոշումը» բառերով:

Կողմ-12 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29/06/2021Թ. ԹԻՎ 65Ա,13/082021Թ. ԹԻՎ 78Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԵՎ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ «ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐՈՎ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՍԱԿԱԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐԻ, ՎԱՐՈՐԴԻ, ՏՐԱԿՏՈՐԻՍՏԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.ՈՒԺը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 29/06/2021թ. «Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայով, բարձիչ էքսկավատորով, «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով և վոլտրա-90 ՏԳ մակնիշի բուլդոզերով մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ սահմանելու մասին» թիվ 65Ա որոշումը:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 13/08/2021թ. «Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող էլազ-բլ 880 բարձիչ էքսկավատորով, «կամազ» մակնիշի ավտոմեքենայով, վոլտրա-90 տգ մակնիշի թրթուրավոր բուլդոզերով, «գազել» մակնիշի միկրոավտոբուսով և «ուազ» մակնիշի ավտոմեքենայով համայնքապետարանին մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ և վարորդի վարձատրության չափ սահմանելու մասին» թիվ 78 որոշումը:

3.Սահմանել Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրած գյուղատնտեսական տեխնիկաներով, տրանսպորտային միջոցներով մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ՝ համաձայն հավելված 1-ի:

4.Սահմանել մեխանիզատորի, վարորդի, տրակտորիստի վարձատրության չափ՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ- 8 Դեմ- 4 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի ևբնակավայրերի տարածքների գոտեվորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ևփոփոխման կարգը հաստատելու ևՀայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 17/03/2023թ. N2/փ-55, 17/03/2023թ. N2/փ-56, 17/03/2023թ. N2/փ-57, 22/03/2023թ. N2/փ-66 դրական եզրակացությունները, ***ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում Վարդահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը էներգետիկայի.

գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0230, մակերեսը՝ 0,11933հա,
գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0600-0008, մակերեսը՝ 0,05557հա,
գյուղատնտեսական նշանակության արոտավայր, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0231, մակերեսը՝ 0,0213հա,
գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-041-0202-0184, մակերեսը՝ 0,04695հա:

Կողմ- 8 Դեմ- 4 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Վարդանյան Վարդան

Հարությունյան Կարեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Համայնքի ղեկավար՝

_____ Արթուր Ստեփանյան

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը _____